ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

ԿՈԴԵՔՍ ԱԼԻՄԵՆՏԱՐԻՈՒՍԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CODEX ALIMENTARIUS COMMISSION

Կոդեքս Ալիմենտարիուսի հանձնաժողովը՝ ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) և ՄԱԿ-ի առողջապահության կազմակերպության (WHO) կողմից համատեղ ստեղծված կառույց է:

Կոդեքս Ալիմենտարիուսը սննդամթերքի ստանդարտների և դրանց վերաբերող տեքստերի հավաքածու է, որոնք միջազգայնորեն ընդունված են և ներկայացված են միասնական տեսքով: Այս ստանդարտները նպատակ ունեն պաշտպանելու սպառողների առողջությունը և երաշխավորելու սննդամթերքի արդար առևտուրը: Կոդեքս Ալիմենտարիուսն ընդգրկում է նաև մեթոդական ցուցումներ, ուղեցույցներ, կանոններ և այլ փաստաթղթեր:

1963 թվականին հիմնադրված Կոդեքս Ալիմենտարիուսի հանձնաժողովը միջկառավարական մարմին է, որին անդամակցում են 188 պետություններ և 1 կազմակերպություն (Եվրամիություն): Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է կազմակերպությանը 1994թ. դեկտեմբերից:

Կոդեքս Ալիմենտարիուսի հանձնաժողովի ենթակառուցվածքային մարմիններից են ընդհանուր հարցերով կոմիտեները, ապրանքային կոմիտեները և տարածաշրջանային համակարգող կոմիտեները:

Կոդեքսի ստանդարտները վերաբերում են սննդամթերքի տարբեր տեսակներին, սննդի հիգիենային, սննդային հավելումներին, պեստիցիդների և անասնաբուժական դեղորայքի մնացորդային քանակներին, աղտոտիչներին, մակնշմանը, վերլուծության և նմուշառման մեթոդներին, ինչպես նաև սննդամթերքի ներմուծման և արտահանման վերահսկողության և հավաստագրման համակարգերին:

Կոդեքսի համապատասխան կոմիտեները մշակում են Կոդեքսի ստանդարտները ռիսկերի վերլուծության կիրառմամբ և հիմք ընդունելով FAO/WHO-ի փորձագիտական մարմինների կողմից տրամադրվող անկախ գիտական խորհրդատվությունը:

Ռիսկերի վերլուծությունը գիտական հիմք է հանդիսանում Կոդեքսի սննդամթերքի անվտանգության ստանդարտների մշակման համար: Կոդեքսի ստանդարտները Առևտրի համաշխարհային կազմակերպության կողմից ճանաչվել են միջազգային հղումներ՝ սննդամթերքի անվտանգության ստանդարտների համար: